

ԽՆԴՐԱԶՈՒՐԿ ԱՆՑՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
/ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ/

Դժվար է ըմբռնել նախադասության բովանդակությունը, եթե փորձենք այն մեկնաբանել առանձին նախադասություններով, առանց դիմելու համատեքստի: Բ. Մալինովսկին և Յ. Ֆիրսը համոզված են, որ լեզվի նկարագրությունը չի կարող լիարժեք համարվել առանց դիմելու իրադրային համատեքստի (context of situation), որտեղ գործում է տվյալ լեզուն (Malinowski 1923; Firth 1957): Այս դատողությունն ավելի հիմնավորված է, քան Լ.Բլումֆիլդի ցուցաբերած մոտեցումն այդ հարցին: Ըստ վերջինիս կարծիքի՝ ինչը ուղղակիորեն զուգորդվում է վարմունքաբանության (behaviourism)/ հետ, իմաստը հավասարվում է իրադրությանը (Bloomfield 1933): Այս ծայրահեղ մոտեցումը որոշ լեզվաբաններ (այդ թվում Ֆ.Պալմերը) խիստ քննադատության են ենթարկում (Palmer 1974): Յ.Ֆիրսի մոտեցումը այդ հարցի վերաբերյալ հետևյալն է. բառի իմաստը կարելի է ճիշտ ընկալել այն բառերի միջավայրում, որոնց հետ այն, ինչպես լեզվաբանն ասում է, բարեկամական կապի մեջ է մտնում (keep the company) (Firth 1957):

2.Բառերը և 2.Յուրը նույնպես այն կարծիքի են, որ նախադասությունը ճիշտ վերլուծելու համար և դրա թույլտրելիության մասին ամբողջովին կարծիք ստեղծելու համար պետք է դիմել համատեքստի, այն պայմանների ուսումնասիրությանը, որտեղ հնչել է տվյալ նախադասությունը (Brown and Yule 1983: 25-26): Լեզվաբանները տարբերակում են երկու տեսակի համատեքստ՝ 1. լեզվական, 2. արտալեզվական: Առաջինը տեքստի այն հատվածն է, որի սահմաններում պարզորոշ է դառնում նրա մեջ մտնող լեզվական տարրերի, միավորների նշանակությունը: Երկրորդի դեպքում կարևորվում է այն բնական միջավայրը, որտեղ տվյալ նախադասությունն արտաբերվում է: Յ.Ֆիրսը մեծ կարևորություն է տալիս լեզվաբանական համատեքստին, որը նա անվանում է collocation (բառադարձվածական կապակցելիություն) (Firth 1957): Լեզվաբանական համատեքստը կարևորվում է նրանով, որ ա) այն թույլ է տալիս ի հայտ բերել բառի տարբեր իմաստները, բ) բառերը կարող են ունենալ յուրահատուկ իմաստներ որոշ կապակցություններում: Օրինակ՝ abnormal, exceptional բառերը հավասարաչափ կարող են գործածվել weather բառի հետ, եթե ցանկանում ենք շեշտել արտասովոր շոգը նոյեմբեր ամսին: Նույն ածականները, ասենք,

child բառի հետ կապակցվելիս, չեն ցուցաբերում նույն համակոորդությունը, զրոստորելով տարբեր իմաստներ. exceptional child - արտակարգ ունակություններ ունեցող երեխա և abnormal child - աննորմալ, հիվանդ երեխա: Ֆ. Պալմերն ասում է, որ բառերի դարձվածքային կապակցելիությունը դիտում է որպես իմաստի որոշակի մակարդակ, մյուս լեզվաբանները դա տարածում են լեզվաբանական վերլուծության այլ մակարդակների վրա, մասնավորապես բառագիտության վրա, ինչն անմիջական առնչություն ունի քերականության հետ (Palmer 1982: 35-40):

Քանի որ տեքստը ծավալվում է գծայնորեն, առանձնացվում է համատեքստի երկու տեսակ՝ աջակողմյան (հաջորդող) և ձախակողմյան (նախորդող)։ Տարբերակվում են նաև բացահայտ կամ արտակա (explicit) և ոչ բացահայտ կամ ներակա (implicit) համատեքստ։ Վերջինս դիտվում է որպես կանխենթադրության ձևերից մեկը, որը ներկայացվում է իբրև ֆոնային գիտելիքներ՝ նախորդող կամ հաջորդող իրավիճակի վերաբերյալ (Новиков 1983): Ջ. Տորսունվան բնորոշում է համատեքստը որպես տեքստի հատված միևնույն/հաճախ/ որոշյալ միավոր (Торцева 1990): Ն.Ամոսովան առանձնացնում է լեզվական և արտալեզվական փոխկապակցության մեջ գտնվող ցուցիչների միավոր։ Եթե առաջին դեպքում ցուցիչները գտնվում են հենց տեքստի մեջ և ներկայացված է լեզվական միավորներով, ապա երկրորդում իմաստն իրականացվում է այն միավորի հաշվին, որը գտնվում է տեքստի սահմաններից դուրս։ Այս դեպքերի համար, խոսքային ակտի պայմանները նյութապես արտահայտված չեն։ Ն.Ամոսովան գործածում է «խոսքային իրավիճակ» գիտաբան, ինչի սահմաններում առանձնացվում է հետևյալ երթատեսակներ՝ «նկարագրական իրավիճակ» (описательная ситуация), «կյանքի իրավիճակ» (жизненная ситуация) և «թեմատիկ իրավիճակ» (тематическая ситуация) (Амосова 1968):

Այժմ դիտենք, քե ինչպես է անցողական բայերի գործածությունն առանց խնդրի պայմանակարված համատեքստով։ Այսենք լեզվաբանական համատեքստից, որը ներկայացված է նախորդող և հաջորդող նախադասություններով, հետևաբար, կարող ենք խոսել նախորդող կամ հաջորդող համատեքստի մասին։ Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտարկվող կառույցներում խնդրի գեղչումը կարելի է բացատրել համատեքստի երկու նշված տեսակով։ 2.Ֆիլմորը համատեքստային մեթոդի կիրառումը համարում է շատ արդյունավետ բաց թողնված խնդրի վերականգնման հարցում (Fillmore 1986):

Բերենք օրինակներ՝ Նախորդող համատեքստ

ա. Dr. Harvey was examining her. When he finished, he said reassuringly... (Sheldon 205): p. The workmen finished and the house became quiet and serene. (Sheldon 204): q. The war is over. Did you hear? (Williams 432):

Օրինակներում բերված անցողական բայերը գործածված են առանց խնդիրների, բայց դրանք միանգամայն ըմբռնելի են և կարող են վերականգնվել նախորդ նախադասությունից. ա. When he finished examining her... p. The workmen finished building... q. Did you hear that the war is over?

Հաջորդող համատեքստ

ա. I know, I know. It seems unimportant to you what I'm doing, what I want to do. (Williams 453)

p. Don't you see? She's trying to tear us apart, my dear? (Heller 137)

Երկու դեպքերում էլ խնդրի բացակայությունը լրացվում է հաջորդող նախադասությամբ, որը կցվում է դրան որպես խնդիր-երկրորդական նախադասություն. ա. I know that it seems unimportant to you...

p. Don't you see that she's trying to tear us apart...

Որոշ դեպքերում խնդրի բացթողումը կարելի է բացատրել ամբողջ տեքստի մակարդակով: Դիտենք հետևյալ օրինակները. ա. "You really played great", remarked Tashkenian. (Segal 336): p. "I shall never write again". (London 313):

q. "Can he paint still?" (Maugham 210):

Առաջին դեպքում play բայն առնչվում է Է. Սեգալի վեպի հերոս՝ հռչակավոր դաշնակահար Ֆենի Ռոսսիի հետ, երկրորդ դեպքում՝ բառերը պատկանում են Ջ. Լոնդոնի նույնանուն վեպի հերոսին՝ գրող Մարտին Իդենին, երրորդում խոսքը գնում է նկարիչ Ստրիքլենդի մասին (Ս. Մոեմի հայտնի վեպից The Moon and Sixpence): Հետևաբար, խնդիրների (the piano, novels or stories, pictures) հիշատակումը տվյալ համատեքստում միանգամայն ավելորդ է:

Այժմ փորձենք բացատրել խնդրի զեղչումը արտալեզվական համատեքստով: Շ. Բալլին նշում է, որ լեզուն, բացի լեզվական միջավայրից, ունի մի շարք այլ միջոցներ. որոնց շնորհիվ հնարավոր է լինում ճիշտ ընկալել նախադասության իմաստը: Դրանք այն պայմաններն են, որոնք ընդգրկում են խոսելու պահին անձին շրջպատող մարդկանց, իրերը, բնությունը (Балли 1955:623): Բերենք օրինակ՝

"Close, please." The make-up artist is brushing at my eyelids. "Now open."

"Close again", says the make-up artist. Reluctantly I close my eyes and feel her brushing yet more shade on. At last she withdraws. "Open".

I open my eyes to see Guy standing in the same spot, a few yards away.

(Kinsella 398)

Ինչպես տեսնում ենք, ուղղակի խոսքում գրիմարաբը չի գործածում eyes բառը այն պատճառով, որ նրա և հաճախորդի միջև կա իրավիճակի փոխադարձ ըմբռնում, իրերի և գործողությունների փոխկապակցություն: հաճախորդն եկել էր գրիմարաբի մոտ կոպերը ներկելու համար և close, open բայերի գործածումը առանց այդ խնդրի (eyelids) միանգամայն ըմբռնելի է երկուսի համար: Լեզվաբանական համատեքստով կարելի է բացատրել նաև այն դեպքերը, երբ անցողական բայը կրկնվում է, բայց այս դեպքում առանց խնդրի: Օրինակներ՝

ա) Take a little drop. Go on. Take. Take. Don't be shy. Take. (Mankowitz 381)
բ) "He does not understand a word you're saying."

Jennifer would reply," Joshua understands." (Sheldon 210)

գ) "I know literature more than you do."

"Yes, you are Bachelor's of Arts and you ought to know". (London 279)

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս տեսակի խնդրագուրկ կառույցները հանդիպում են երկխոսություններում: խնդիրը չի կիրառվում երկրորդ (երրորդ) անգամ, քանզի դրա կարիքը չկա, այն հնչել է նախորդ նախադասությունում և խոսողի կամ լսողի համար այն ներկայացնում է պարզ, կոնկրետ առարկա՝ understand a word, know literature, play bridge:

Այժմ տեսնենք, թե ինչպես է գործում է արտալեզվական, մեր դեպքում՝ գործաբանական-հաղորդակցական համատեքստը խնդրագուրկ անցողական բայերով կազմված կառույցներում: Ա Գոլդբերգն իր "Կառուցվածքային քերականություն" աշխատությունում (Construction Grammar) գրում է, որ խնդրի գեղչումը հնարավոր է այն դեպքում, երբ ասույթում (discourse) այն չի կարևորվում, այսինքն՝ այն չի գտնվում հաղորդակցության կիզակետում (communicative focus) (Goldberg 2001:522): "Կիզակետ" հասկացությունը մանրամասնորեն մշակվել է մի շարք լեզվաբանների կողմից (Chafe 1976; Dik 1981; Lambrecht 1996 և ուրիշներ): Կան երկու ընդհանուր մոտեցումներ "կիզակետ" կամ "ֆոկուս" գիտաբանի նկատմամբ՝ դա առնչվում է նախադասության առկայական անդամատման հետ, որտեղ առանձնացվում են ըստ տեղեկատվության կարևորության աստիճանի երկու տարր՝ ռեմա (rheme) և թեմա (theme): Կիզակետում կարող է հայտնվել ասույթի ցանկացած բաղադրիչ, ինչը դիտվում է որպես նշույթավորված ֆոկուս (marked focus) կամ ռեմա: Ասույթի այն մասը, որ ենթարկվում է այդ տեսակի շեշտադրման, համարվում է գործաբանականորեն նշույթավորված (pragmatically-marked) տարր (Payne 2011:367-369):

Շաղթողակցական տեսակետից խնդրագուրկ կառույցների կիրառությունը կարելի է բացատրել նրանով, որ խոսողի համար ավելի կարևոր է ինքը գործողությունը, քան խնդիր-առարկան: Օրինակներ՝

ա) Sing like hell! They must hear us. Sing! Sing!.... They've heard us! Shout! Hooray! (Corrie 313)

բ) You have to eat", Michael Moretti took Jennifer's arm and she found herself walking beside him. (Sheldon 217)

գ) "It's not how you play the game, it's whether you win or not?" (Sheldon 159)

դ) "If you can, wait to sell until prices are high". (LLA)

Բերված օրինակներում խնդրագուրկ բայերի գործածությունը կարելի բացատրել հետևյալ կերպ. ա) մի խումբ հանրափորներ պայթյունից հետո մնացել էին փլատակների տակ և որպեսզի գրավեն վերևում գտնվող մարդկանց ուշադրությունը իրենցից մեկին խնդրում են երգել, որպեսզի լսելի լինեն, որպեսզի մարդիկ գան օգնության, ըստ որում դա հազվա թե կարելի է որակավորել որպես երգ, դա ավելի շուտ նման էր օգնության ճչի, բ) Ջենիֆերը այնքան հոգնած և ուժասպառ էր, որ Մայքլը որոշեց նրան տանել ռեստորան որևէ բան ուտելու, գ) այստեղ կարևորվում է գործողության արդյունքը, ոչ թե ինչպես ես խաղում, դ) շեշտվում է վաճառքը որպես գործողություն առանց կոնկրետացնելու ապրանքի տեսակը:

Մ.Լ.Էմենզը գտնում է, որ շատ դեպքերում անցողական բայերի գործածությունն առանց խնդրի պայմանավորված է ոչ միայն հաղորդակցական, այլև գործաբանական չափանիշով: Խնդրագուրկ կառույցները, ինչպես պնդում է Մ.Լ.Էմենզը, կենտրոնացված են գործողի վրա (actor-focused) ի տարբերություն կրողի վրա (patient-focused): Դրանք չեն վերագրում գործողությունները կոնկրետ իրադարձություններին, և էթե նույնիսկ այդ գործողություններն առկա չեն որոշակի առարկաների կամ իրողությունների հետ, վերջիններս կարող են գեղջվել: Օրինակներ՝ ա) "I said "No", but Harry asked three times, and at the third I thought it became me to yield".

"Mr. Redfern asked but once and then went away". (Brighouse 82)

բ) He told her again that if she wanted him she had only send and he would come at once. (Maugham 211) գ) He knows, Annie. He knows!

What the hell has that got to do with? (Miller 407)

Բոլոր երեք օրինակներում խնդիրները հեշտությամբ կարող են վերականգնվել համատեքստից՝ ա) asked to marry him, բ) send someone after him, գ) that George's father destroyed them.

Դիտարկենք այլ գործաբանական պայմանները, որոնք թույլ են տալիս անցողական բայերի կիրառությունն առանց խնդրի: Դրանք են՝

1. Խոսողը չի ցանկանում նշել առարկան, ելնելով քաղաքավարության սկզբունքից: Քաղաքավարության տեսությունը մանրամասնորեն մշակել են Հ.Գրայսը (Grice 1975), Զ.Լիչը (Leech 1983), Փ.Բրաունը և Մ.Լևինսոնը (Brown and Levingston 1987): Քաղաքավարության տեսության

հիմնական էությունն այն է, որ պետք է նվազագույնի հասցնել կոպիտ, ոչ բարեկիրթ վարքագիծը՝ բարելավելով քաղաքավարի վարքագիծը: Ջ.Լիչը քաղաքավարության հատկությունների մեջ ընդգրկում է համեստությունը, մեծահոգությունը, նրբազգացությունն ու առատաձեռնությունը (Leech 1983:81): Բերենք օրինակներ լուսաբանելու այդ դրույթը՝

rank: I **understand**, of course.

Vivie: **Understand** what?

Frank: Oh, I'm not a fool in the ordinary sense: only in the Scriptur sense of doing all the things the wise man declared to be folly..." (Shaw 242)

Բերված օրինակում խնդրագուրկ բայի կիրառումը կարելի է բացատրել հետևյալ կերպ.Ֆրանկը փոխել է իր վերաբերմունքը Վիվիի նկատմամբ այն բանից հետո, երբ ի հայտ եկան աղջկա մոր զբաղմունքի մասին այն բոլոր տհաճ փաստերը (նա հասարակաց տների տնօրենտի էր): Նա ուղիղ պատասխան չի տալիս աղջկա հարցին: Փոխարենը, Ֆրանկը ծավալվում է ինչ-որ փիլիսոփայական մտորումների շուրջ՝ այդպիսով խուսափելով կոնկրետացնելու իր պատասխանը:

2. Խոսողը դիտավորյալ չի նշում խնդիրը, որովհետև այն նրան ցավ է պատճառում: Օրինակներ՝

ա) I could kill Forgione for that, I could kill him right there on the spot because what he says is true and I didn't want anyone to **notice**. (Heller 230)

բ) Do they **know**?" He asked at last. (Maugham)

գ) "How much of the truth", he said, "do you think Julian guessed?"

"He **knew**", said Maxim slowly. "Of course he **knew**." (Maurier 390)

դ) "Last year", he said, "I **lost**... I experienced a loss, yes, I lost my..." (Tyler 189)

Առաջին օրինակը նկարագրում է հոր հոգե-հուզական վիճակը, երբ դպրոցի ուսուցիչը խոսում էր իր որդու բարդությունների, նրա ոչ ադեկվատ վարվելաձևի մասին, իր հասակակիցների հետ ունեցած բարդ հարաբերությունների մասին: Հայրը գիտե այդ ամենը, բայց նա չի ցանկանում այդ մասին խոսել, չի ուզում, որ մարդիկ տեսնեն, նկատեն, որ իր որդին մտավոր հետամնաց է: Երկրորդ օրինակում խոսքը գնում հայտնի նկարիչ՝ Ստրիքլենդի մասին (Ս.Մոեմ), որի մոտ բժիշկը հայտնաբերել էր բորոտության ախտանիշեր: Ստրիքլենդը այնքան ցնցված է, որ չի կարող արտաբերել այդ բառը (leprosy): Երրորդում՝ Մաքսիմը համոզված էր, որ փաստաբան Ջուլիանը գիտեր, թե ով է իրական հանցագործը, բայց ինքը՝ Մաքսիմը, չէր կարող այն արտաբերել նույնիսկ իր կնոջ ներկայությամբ: Իսկ չորրորդ օրինակում մենք տեսնում ենք, որ խոսողը (ով կորցրել է իր որդուն) այնքան հուզված է, որ չի կարողանում ավարտել նախադասությունը, այսպիսով խնդիրը՝ my son մնում է չարտաբերված:

3. Խոսողը չի նշում խնդիրը վախից դրդոված: Բերենք օրինակ Ջ.Հելլերի վեպից: "Something happened": "Ինչ որ բան պատահեց":

"I am going to tell her."

«Are you?» His manner turns solemn.

«What?»

«You know».

«What?»

«What I did.»

«Did you do something?»

«You know.»

«I can't remember.»

«What I gave away.»

«Did you give something away?»

«Daddy, you know I gave a nickel away.» (Heller 280)

Բերված երկխոսությունից պարզ է դառնում, որ փոքրիկ տղան վախենում է խոստովանել հորը, որ նիկելը (5 ցենտ) տվել է իր ընկերներից մեկին: Միայն հոր երկար հարցափորձից հետո, տղան համարձակվում է նշել իր «մեղքի» էությունը:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում խնդրագուրկ կառույցների կիրառումն անընդունելի է հանրա-մշակութային պատճառով: Օրինակ՝ drink բայի գործածությունը առանց խնդրի ցանկալի չէ այն հասարականություն, որտեղ ոգելից խմիչքներն արգելված են կրոնական, կամ բարոյական նկատառումներով: Հետևաբար, այդպիսի հասարականություն drink բայն անպայմանորեն չի զուգորդվում ակոհոլի հետ, ինչի պատճառով էլ ուղիղ խնդիրը սովորաբար գործածվում է նշված բայի հետ: Ստորև բերվում են օրինակներ՝ քաղված Ե.Ջիլբերթի վեպից/ Eat.Pray.Love /, որում հեղինակը նկարագրում է հնդկաստան կատառած ճանապարհորդության և հնդիկ-գուրուների հետ իր հանդիպումների մասին:

ա/ I spent my afternoon with Ketut, the medicine man, talking and **drinking** coffee.
(Gilbert 271)

բ) Soon Wayan .. was making me **drink** **jamu** – traditional Indonesian homemade medicinal concoctions. (Gilbert 260)

Նմանապես, shave բայը միշտ չէ որ կիրառվում է face բառի հետ, հատկապես այն հասարականությունում, որտեղ տղամարդիք կրում են մորուք: Այս դեպքում խնդրի առկայությունը նախադասության կառույցում դառնում է զրեթե պարտադիր: Օրինակներ՝

Fodo's **shaved** his moustache off. I can't bear to look at him. (Chekhov 71)

Խնդիրը չի զեղչվում նաև այն դեպքում, երբ shave բայը կապակցվում է մարմնի այլ մասեր (բացի դեմքից) արտահայտող գոյականների հետ: Օրինակ՝ I don't care if you shave your legs every day. (Gilbert 298)

Այսպիսով, անցողական բայերի խնդրի զեղչումը կարելի է բացատրել իրադրային համատեքստով՝ նախորդող և հաջորդող, երբ կրկնողության դեպքում բայը կիրառվում է առանց նախադասության այդ անդամի: Խնդրի հիշատակումը կառույցում համարվում է ավելորդ, երբ հաղորդակցական կիզակետում գտնվում է ինքը գործողությունը, այլ ոչ թե առարկան, որին ողղված է այդ գործողությունը: Խնդրի զեղչումը պայմանավորված է նաև հաղորդակցական և գործաբանական գործոններով, ինչպես նաև տարբեր հոգեբանական և բարոյական նկատառումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1 Biber et al. Grammar of Spoken and Written English. London: Longman, 2000.
- 2 Bloomfield L. Language. New York: Holt, Rinehart and Winston, 1933.
- 3 Firth J. R. Papers in Linguistics. London: Oxford University Press, 1957.
- 4 Fillmore, Ch. Pragmatically-controlled Zero Anaphora. - Proceedings of the 12 th Annual Meeting of the Berkley Linguistic Society. CA, BLS, 1986.
- 5 Firth J. R. Papers in Linguistics. London: Oxford University Press, 1957.
- 6 Goldberg A. Constructions, lexical semantics and the correspondence principle. - Erteschik-Shir, N.& Rappoport, T.(eds) The Syntax of Aspect Oxford: OUP, 2005.
- 7 Lemmens M. More on Objectless Transitives and Ergativization Patterns. - 'Construction Grammar conference'. Marseille, 2004.
- 8 Leech G. Principles of Pragmatics. Cambridge: Cambridge University Press, 1983.
- 9 Malinowski B. The Problem of meaning in primitive languages. - Ogden and Richards, Meaning of meaning, 1923.
- 10 Palmer P.H. The English Verb. London, 1974.
11. Payne Th. Understanding English Grammar. Cambridge: Cambridge University Press, 2011.
12. Амосова Н.Н. Английская контекстология. Л., 1968.
13. Балли Ш. Общая лингвистика и вопросы французского языка. М.: 1955.
14. Новиков А.И. Семантика текста и ее формализация. М.: Наука, 215с.
15. Торсуева И. Г. Контекст.- Лингвистический энциклопедический словарь. М.: СЭ, 1990.

Условия функционирования безобъектных транзитивных конструкций (на базе английского языка)

Функционирование безобъектных транзитивных конструкций в английском языке возможно в следующих случаях: а) объект отмечен либо в предыдущем, либо в последующем контексте, поэтому его повторение в конструкции является излишним; б) объект не упоминается, поскольку ремой сообщения является само действие, а не предмет, на который распространяется это дейст. вне; в) объект опускается в силу прагматических и психологических факторов. В некоторых случаях сохранение дополнения детерминировано этнически-социальными соображениями.